ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

Առողջության համապարփակ ապահովագրության շրջանակներում բնակչության կանխարգելիչ հետազոտությունների իրականացման ենթաօրենսդրական փաստաթղթերի մշակում

ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ առողջապահության նախարարությունը նախաձեռնել է առողջության համապարփակ ապահովագրության (ԱՀԱ) համակարգի ներդրման գործընթաց: 2023 թվականին ընդունվել է ԱՀԱ ներդրման հայեցակարգը: Առողջության համապարփակ ապահովագրության ներդրումը ներառված է նաև Կառավարության 2021-2026 թթ-երի ծրագրում, ինչպես նաև Առողջապահության նախարարության 2023-2026 թթ-երի ռազմավարական ծրագրում: Ռազմավարական ծրագրերի միջոցառումներով նախատեսվում է, որ ԱՀԱ կներդրվի փուլային՝ սկսած 2024թ-ից երկրորդ կիսամյակից, որին պետք է նախորդի ապահովագրության շրջանակներում տրամադրվելիք հիմնական և նվազագույն ծառայությունների փաթեթների մշակումը, ներառյալ հիվանդությունների կանխարգելման և վաղ շրջանում հայտնաբերման նպատակով իրականացվող պարտադիր սքրինինգային հետազոտություններ:

ԱՀԱ մասին օրենքի նախագծով նախատեսվում է, որ Առողջապահության նախարարությունը պետք է սահմանի վերոնշյալ պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության իրականացման կարգը, պայմանները, ինչպես նաև տեղաշարժման սահմանափակում և հաշմանդամություն ունեցող պացիենտների դեպքում բժշկական կանխարգելիչ զննության առանձնահատկությունները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Փորձագետի աշխատանքի հիմնական նպատակը պարտադիր բժշկական կանխարգելիչ զննության իրականացման կարգի, պայմանների վերաբերյալ փաստաթղթի մշակումն է, ներառյալ

1. ԱԱՀ ծառայությունների փաթեթում ընդգրկված երեխաների կանխարգելիչ հետազոտությունների իրականացման կարգի, պայմանների մշակում և իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկի կազմում:

2. Սքրինինգային ծառայության իրականացման մոդելի ստեղծում՝ սքրինինգի իրականացման սխեմայի մշակման և անձի, բժշկական անձնակազմի ներկայացուցչի, ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից իրականացվող անհրաժեշտ և պարտադիր քայլերի հաջորդականության նկարագրում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Սքրինիգային հետազոտությունների իրականացման մոդելի մշակում, ներառյալ՝ նախատեսվող սքրինինգների եղանակների, իրականացման սխեմայի և անձի, բժշկական անձնակազմի ներկայացուցչի, ծառայություններ մատուցող կազմակերպության կողմից իրականացվող անհրաժեշտ և պարտադիր քայլերի հաջորդականության նկարագրում:
2. Ծառայությունների իրականացման հնարավորությունների/կարողությունների համալրման առաջարկների ներկայացում, ինչպես նաև բժշկական ապրանքների և տեխնոլոգիաների ընտրության առաջարկների ներկայացում :Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների մշակում, իրականացման համար պահանջվող ներդրումների/ֆինանսական միջոցների գնահատում:

Բացի վերը նշված աշխատանքներից, փորձագետը, ըստ անհրաժեշտության, առողջապահության ֆինանսավորման խորհրդատուի/թիմի ղեկավարի կողմից կարող է ներգրավվել ԱՀԱ ներդրման ապահովմանն ուղղված միջոցառումներին վերաբերող խորհրդակցությունների, հանդիպումների, քննարկումների ընթացքում իր աշխատանքի նկարագրով սահմանված աշխատանքների ներկայացման և այլ նպատակով:

Փորձագետը նաև պետք է մասնակցի սույն աշխատանքի նկարագրով պայմանավորված պրեզենտացիա/ների կազմմանը, նկարագրելով առաջ քաշված մոտեցումները և տրված լուծումները:

ՓՈՐՁԱԳԵՏԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Փորձագետին ներկայացվող պահանջներն են.

- Բարձրագույն բժշկական կրթություն և աշխատանքային ավելի քան 10 տարվա փորձառություն վերոնշյալ մասնագիտական ոլորտում՝ մանկաբուժություն, հայերենի գերազանց իմացություն, ռուսերենի և անգլերենի լավ իմացություն, համակարգչային գիտելիքներ մայքրոսոֆթ օֆիսից, ինտերնետ բրոուզերներից, օնլայն հարթակներից օգտվելու և դրանց հետ աշխատելու կարողություններ, թիմում աշխատելու և ըստ անհրաժեշտության ծանրաբեռնված աշխատելու պատաստակամություն:
- Սքրինինգային հետազոտությունների ուսումնասիրություններին կամ հետազոտություններին մասնակցություն կամ այդ աշխատանքների առաջնորդման փորձառություն:
- Սքրինինգային հետազոտությունների միջազգային փորձի տիրապետում: